ուել։ Դրա ամենևքեան նշանաւոր հոգևկան և մարմնական բարեկազմութեամբ և բարեդործ և պարթեւ՝ առողջ կազմուածքի տէր մարդիկ էին, և ապրել են բաւական երկար։

1. Ամենաս ազան վախճանուել է Զամախի քաղաքում 28ին յուլիսի 1864 թ. 67 տարեկան հասակում։

2. Յովհաննէս ազան վախճանուել է Զամախում 13ին մարտի 1843 թ. 38 ամաց հասակում։

3. Աբրահամ ազան վախճանուել է Զամախում 12 յուլիսի 1869 թ. 69 ամաց հասակում։

4. Մկրտիչ ազան վախճանուել է Զամախում 2 յունվարի 1856 թ. 63 ամաց հասակում։

5. Մարգարէ ազան վախճանուել է Զամախում 18 մարտի 1864 թ. 60 տարեկան հասակում։

6. Յակոբ ազան վախճանուել է Զամախում 20 օգոստոսի 1838 թ. 19 ամաց հասակում։

7. Դէորգ ազան վախճանուել է Բագու քաղաքում 1889 թ. ապրիլի 16ին 75 ամաց հասակում։

1888 թ. հոկտեմբերի 22ին, երբ ի Ծէր հանգուցեալ ամենայն Հայոց Մակար Կաթուղիկոսը բարեհաճեցաւ այցելել Բագու քաղաքին, հինգ օր մնաց իւր վեհախմբով հանգուցեալ Դէորգ ազայի պալատանման տանը։ Դէորգ ազան մեծ հիւրասիրութիւն և յարգանք ցոյց տուեց Վեհափառ Հայրապետին և նորին Օծութեան վեհախմբին և Բագուայ հայ հասարակութեան պատուելի անդամոց։ Նորին Վեհափառութեան յօգուտ Ս Էջմիածնի տաճարի վերանորոգութեան 15 հազար մանէթի չափ դրամք և այլ նուէրներ տալով, ճանապարհեցին մեծ պատուով[1]։ Ճանապարհելուց յետոյ Դէորգ ազան Բագուայ պ. նահանգապետին, քաղաքագլխին և այլ աստիճանաւոր անձանց և բագուաբնակ նշանաւոր վաճառականաց մեծ հայկերոյթ տուեց իւր եղբօր Կարապետ ազայի հետ միասին՝ շնորհակալութիւն յայտնելով նրանց, որ մեծ սիրով և յարգանքով վե-

---

[1])Ալայեանց իշխանաց տանը կան քանի կաթուղիկոսաց օրհնութեան դրնդակներ։ Տես վերեւ՝ յերես 219 և 220։